դատական գործերի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը (և էլեկտրոնային և թղթային տարբերակով ստացված):

5. Մշակել և ներդնել դատական էլեկտրոնային ծանուցումների համակարգ

Կատարողը պետք է ապահովի, որ E-court filing համակարգում օգտվողներն իրենց էլեկտրոնային գրասենյակում ստանան և ուղարկեն ծանուցումներ՝ իրենց վերաբերող գործերում փոփոխությունների, իրենց կողմից կատարված գործողությունների կարգավիճակի, ինչպես նաև այն գործողությունների մասին, որոնք տվյալ պահին հասանելի են կամ անրաժեշտ է կատարել: Համակարգը պետք է հնարավորություն տա դատական ծանուցումները, Պատվիրատուի հետ համաձայնեցված էլեկտրոնային որևէ եղանակով (SMS հաղորդագրություն, էլեկտրոնային փոստ կամ այլ) և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ, ուղարկել համապատասխան դատավարական կողմին:

Այս մոդուլը նաև պետք է հնարավորություն տա արագ և հարմար եղանակով ավտոմատացնել CAST համակարգի հնարավոր բոլոր այն գործառույթները, որոնք կապված են էլեկտրոնային փաստաթղթերի ստացման և ուղարկման հետ: Օրինակ՝ համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից CAST համակարգի դատական գործերի էլեկտրոնային քարտերում նիստերի վերաբերյալ տեղեկատվություն լրացնելու դեպքում կամ վարույթի որոշումը տեղադրելուց հետո և այլն համակարգը ավտոմատ հատուկ մշակված շաբլոնային գրությունների միջոցով՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներ, որոշումներ և այլն ուղարկի կողմերին:

Դատական ծանուցումներ ուղարկելու համար այս ծրագրային բաղադրիչը նաև պետք է ապահովի E-citizen համակարգի հետ ինտեգրացում և համատեղելիություն՝ այդ թվում նաև տվյալ ոլորտին առնչվող գործող ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցում: E-court filing համակարգում ծանուցող և ծանուցվող կողմերի փոխադարձ կապի, ծանուցումներին ներկայացվող պարտադիր և ոչ պարտադիր պայմանների, դրանց ուղարկման և ստացման ձևերի, դրանց տեսակների և այլ նկարագրերը՝ գործող ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու համար պարտադիր պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

6. Դատական նիստերի նշանակման և դահլիճների ընտրման ենթահամակարգ

Ստեղծվող E-court filing համակարգում Կատարողը պետք է մշակի ծրագրային ենթահամակարգ, որը հնարավություն կտա ավտոմատ կամ կիսավտոմատ եղանակով նշանակել դատական նիստեր՝ հաշվի առնելով դատավորի, փաստաբանի զբաղվածությունը (մասնակացությունը այլ գործերում) և նախընտրելի օրերը, (արձակուրդ, գործուղում, բացակայություններ): Փաստաբանը Datalex.am կայքի իր էլեկտրոնային գրասենյակից կկարողանա տեսնել իր մասնակցությամբ գործերի դատական նիստերի ժամանակացույցերը և

առաջարկել նախընտրելի օրեր, ժամեր: Հատուկ գործընթացով այս ինֆորմացիան սինխրոնիզացվելու է դատավորի օրացույցի հետ և դատավորը ի վերջո նշանակելու է օր, որը երկուստեք ընդունելի է:

Ենթահամակարգը պետք է իրականացվի CAST համակարգի համապատասխան գործողության (նիստի նշանակում) հարմարավետ ինտերֆեյսում: Հարկավոր է ավելացնել նոր պատուհաններ գոյություն ունեցող ինտերֆեյսներում և ինտեգրել մշակվող տրամաբանությունը CAST-ի տեղաբաշխված սկզբունքով պահվող համապատասխան տվյալների աղբյուրների հետ:

Դատական նիստերի նշանակման և դահլիճների ընտրման համակարգը պետք է ինտեգրվի ծանուցումների համակարգի հետ, որ հնարավոր լինի դատական նիստերի նշանակման գործընթացում գեներացված տվյալները համապատասխան տրամաբանությամբ sms և/կամ email և/կամ էլեկտրոնային գրասենյակի ծանուցումներով ուղարկել հարաբերվող կողմերին: Դատական նիստերի նշանակման և դահլիճների ընտրման ենթահամակարգը պետք է համատեղելի լինի CAST և Datalex համակարգերի գործող և նոր ստեղծվող ենթահամակարգերի հետ և դրա մանրամասն նկարագրերը և ֆունկցիոնալ հնարավորությունները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ:

7. Դատական ակտերի ստեղծման խելացի ենթահամակարգ

Դատական ակտերն ավելի արագ և գրագետ կազմելու համար ստեղծվող E-court filing համակարգում Կատարողը պետք է մշակի դատական ակտերի ստեղծման խելացի ենթահամակարգ: Այս մոդուլը հնարավորություն կտա դատական ակտերը մուտքագրել համակարգ՝ ըստ ձևայնացված տվյալների մուտքի ֆորմաների առանձնացված տվյալների մուտքագրման դաշտերով: Համակարգը ավտոմատ կերպով կբեռնի դատական գործի համապատասխան տվյալները (օրինակ՝ կողմերի անուն, ազգանուն, հասցե, և այլն) ակտերի գեներացման խմբագրիչ, որտեղից հնարավոր կլինի խմբագրել արդեն բեռնված տվյալները, մուտքագրել նոր տվյալներ և տալ հղումներ օրենսգրքերին և համապատասխան հոդվածներին, օրենքներին, փոխկապակցված գործերին և նախադեպերին: Մուտքագրված տվյալների հիման վրա համակարգը կգեներացնի դատական ակտը ըստ ձևայնացված շաբլոնի և կհիշի այն PDF և/կամ այլ ֆորմատով (ըստ անհրաժեշտության) որպես էլէկտրոնային փաստաթուղթ՝ իդենտիֆիկացնելով և պահելով ֆայլային շտեմարանում: Դատական ակտերի ստեղծման խելացի ենթահամակարգը պետք ապահովվի համատեղելիություն CAST համակարգի հետ: Դրա ինտերֆեյսի նկարագիրը, հասանելիությունը համապատասխան օգտվողներին՝ ըստ դատական գործի մասնակիցների տեսակների, դրանում առկա գործիքակազմը և գործիքակազմի ֆունկցիոնալ նկարագրերը պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ:

8. API-ների մշակում արտաքին համակարգերի հետ աշխատելու համար

Այս ծրագրի ընթացքում պետք է մշակվեն մի խումբ API – ներ, որոնք կապահովեն էլեկտրոնային արդարադատության համակարգերի փոխգործելիությունը ՀՀ այլ պետական գերատեսչություններում օգտագործվող էլեկտրոնային կառավարման համակարգերի և պետական ռեգիստրերի հետ, որոնցից են՝

- Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը:
- Ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչության ռեգիստրը:
- ԷԿԵՆԳ-ը:
- E-citizen համակարգը:
- Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը:
- Փաստաբանների ռեգիստրը:
- այլ համակարգեր և ռեգիստրներ՝ ըստ պահանջի ծագման :

Ինֆորմացիայի տրամադրման API - ները շահագրգիռ կազմակերպություններին (նոտարական պալատ, ԴԱՀԿ, բանկեր, վարկային կազմակերպություններ, ՀՀ Դատախազության, նախաքննչական մարմիններ) կտրամադրեն տվյալներ: API-ների մշակման արդյունքում պետք լինի հնարավորություն՝ փոխանակվող տվյալների տեսակավորման՝ ըստ տվյալների փոխանակվող կողմերի:

Նախատեսվում է մշակել API - ներ ինչպես կոնկրետ գործի վերաբերյալ տվյալներ ստանալու, փոխանցելու, այնպես էլ փնտրում կատարելու մի շարք վավերապայմաններով: Այս ենթամակարգը հնարավորույուն կտա շահագրգիռ կազմակերպությունների ծրագրային համակարգերը ինտեգրելու CAST համակարգի հետ:

E-court filing համակարգի գործընթացների քարտեզ



Նկ. 1 – ում E-court filing համակարգի գործընթացների քարտեզի թվանշումների նկարագրություն

Համար	Նկարագրություն
1	Արտաքին օգտագործողների մուտքը Datalex.am
2	Անհատականացման գործընթաց
3	Դատական գործընթացի նախաձեռնում և փոփոխությունների վերաբերյալ սինխրոնիզացիա
4	Էլեկտրոնային փաստաթղթերի գրանցում և պահպանում
5	Դատական գործընթացի նախաձեռնում և փոփոխում դատարանների անձնակազմի կողմից
6	Դատական գործընթացի սահմանում և կոնֆիգուրացում դատական համակարգի ադմինիստրատորի կողմից
7	Արտաքին օգտագործողներին և համակարգերին ծանուցումների ուղարկում
8	API-ներ այլ գերատեսչությունների հետ տվյալների փոխանակման համար

3. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Էլեկտրոնային արդարադատության բարեփոխված և ավելացված ֆունկցիոնալությամբ համակարգերը ներդրվելու են այսօր գոյություն ունեցող դատական համակարգի էլեկտրոնային ենթակառուցվածքի վրա: Ներդրման գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել առանց ընթացիկ դատական գործերի էլեկտրոնային կառավարման պրոցեսների ընդհատման կամ տվյալների կորուստի, ինչպես նաև ինտերֆեյսի փոփոխման/ արտաքին տեսք/: Քանի որ մշակվող համակարգերից օգտվողները դատական համակարգի ներկայացուցիչներն են և հանրությունը, ապա տարբեր թիրախային խմբերին համակարգերի արդիականացման և ներդրման վերաբերյալ ազդարարման, ուսուցման և մոտիվացման տարբեր կառուցակարգեր են անհրաժեշտ ներդնել:

Համակարգի ներդրումը և արդյունավետ օգտագործումը ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- *Փաստաթղթերի և ձեռնարկների մշակում՝*

Անհրաժեշտ է մշակել համակարգերի ադմինիստրատորի և օգտագործողի ձեռնարկներ, իսկ Datalex.am կայքի էլեկտրոնային գրասենյակում տեղադրել նյութեր (Help, FAQ), որոնք կօգնեն օգտագործողներին հասկանալ թե ինչպես է պետք ճիշտ օգտվել համակարգից:

- *Անձնակազմի և օգտագործողների ուսուցում*

Անհրաժեշտ է իրականացնել ToT (Training of Trainers) ֆորմատով դասընթացներ դատարանների ընտրված աշխատակիցներին էլեկտրոնային արդարադատության համակարգում տեղի ունեցած զարգացումների ու փոփոխությունների մասին կրթելու համար: Պետք է իրականացնել սեմինարներ e-court filing համակարգի հիմնական, խոշոր օգտագործողների հետ (բանկեր, խոշոր կոմերցիոն կազմակերպություններ և այլն):

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ծրագրի իրականացման առավելագույն ժամկետը 18 ամիս է՝ սկսած Կատարողի հետ կնքված պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից:

#	Ծառայության Անվանում	Ծառայության Սկիզբ	Տևողություն
1	Համակարգի նկատմամբ պահանջների գնահատում և վերլուծություն	T_0	0,5 ամիս
2	Ֆիզիկական, իրավաբանական անձանց և փաստաբանների խիստ իդենտիֆիկացման և գրանցման համակարգի մշակում	T_0 + 0,5 ամիս	3 ամիս
3	Ֆիզիկական, իրավաբանական անձնական և փաստաբանների էլէկտրոնային գրասենյակի ֆունկցիոնալության զարգացում	T_0 + 1,5 ամիս	6 ամիս
4	էլեկտրոնային փաստաթղթերի գրանցման, իդենտիֆիկացման և պահպանման համակարգի մշակում	T_0 + 2,5 ամիս	5 ամիս
5	Փաստաբանների ռեգիստրի	T_0 + 4,5 ամիս	4 ամիս

	մշակում		
6	Դատական ակտերի ստեղծման խելացի ենթահամակարգի մշակում	T_0 + 5,5 ամիս	4 ամիս
7	Դատական նիստերի նշանակման և դահլիճների ընտրման համակարգի մշակում	T_0 + 6 ամիս	1 ամիս
8	Զարգացումներ CAST համակարգում	T_0 + 0,5 ամիս	7 ամիս
9	CAST և Datalex համակարգերի դատական գործերի սխեմաների, գործողությունների սխեմաների, գործողությունների հաջորդականության, գործողությունների կատարման իրավասությունների մշակում և համակարգի ներդնում	T_0 + 0,5 ամիս	7 ամիս
10	API-ների մշակում արտաքին համակարգերի հետ աշխատելու համար	T_0 + 7 ամիս	2 ամիս
11	Համակարգի ներդրում	T_0 + 9 ամիս	1 ամիս
12	Ձեռնարկների մշակում և օգտագործողների ուսուցում	T_0 + 10 ամիս	3 ամիս
13	Թեստային համակարգի շահագործում և սխալների շտկում:	T_0 + 13 ամիս	5 ամիս

T_0-ն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրն է:

Էլեկտրոնային արդարադատության գործիքները զարգացնող ընկերությունը պետք է լավ ծանոթ լինի օգտագործվող համակարգերի ճարտարապետությանը և մշակված առանձին մոդուլները պետք է չխափանեն ընդհանուր համակարգի աշխատանքը: Բացի դրանից մինչ առանձին ենթահամակարգերի ներդրմանը պետք է ապահովել փորձնական համակարգերի տեստային օգտագործում ընդհանուր էլեկտրոնային արդարադատության համակարգերի ամբողջական ենթակառուցվածքի վրա, վերջնական մանրակրկիտ կիրառման արդյունքների

դիտարկում, որից հետո միայն կարող են գոյություն ունեցող ենթակառուցվածքում ներդրվել առաձին մշակված ենթամոդուլները:

5. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ՝ ԸՍՏ ՓՈՒԼԵՐԻ

Հ/Հ	Ծառայության Անվանում	Ծառայության Սկիզբ
1, 10	• Համակարգի նկատմամբ պահանջների գնահատում և վերլուծություն • API-ների մշակում արտաքին համակարգերի հետ աշխատելու համար(ԴԱՀԿ)	10000000 (տաս միլիոն)
2,5,6.7	• Ֆիզիկական, իրավաբանական անձանց և փաստաբանների խիստ իդենտիֆիկացման և գրանցման համակարգի մշակում • Փաստաբանների ռեգիստրի մշակում • Դատական ակտերի ստեղծման խելացի ենթահամակարգի մշակում • Դատական նիստերի նշանակման և դահլիճների ընտրման համակարգի մշակում	33000000 (երեսուներեք միլիոն)
3,4,8,9,10	• Ֆիզիկական, իրավաբանական անձնական և փաստաբանների էլէկտրոնային գրասենյակի ֆունկցիոնալության զարգացում • էլեկտրոնային փաստաթղթերի գրանցման, իդենտիֆիկացման և պահպանման համակարգի մշակում • Զարգացումներ CAST համակարգում • CAST և Datalex համակարգերի դատական գործերի սխեմաների, գործողությունների սխեմաների, գործողությունների հաջորդականության, գործողությունների կատարման իրավասությունների մշակում և համակարգի ներդնում	20000000 (քսան միլիոն)

	• API-ների մշակում արտաքին համակարգերի հետ աշխատելու համար	
11,12,13	• Համակարգի ներդրում • Ձեռնարկների մշակում և օգտագործողների ուսուցում • Թեստային համակարգի շահագործում և սխալների շտկում:	**18000000 (տասնութ միլիոն)**
Ընդամենը՝		**81000000 (ութսունմեկ միլիոն)**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության
<Դատաիրավական ԾԻԳ> ՊՀ
Ք. Երևան, Զաքյան 3
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ 90001300057 6
ՀՎՀՀ 02553363

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Դ.Անհաղթի 23/22
<Ամերիաբանկ> ՓԲԸ
Հ/Հ՝ 1570003653770100
ՀՎՀՀ 01555207

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 19 » մարտի 2018թ. կնքված
ԴՇԻԳ-ԲՄԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2.1
« 19 » մարտի 2018թ. կնքված
ԴՇԻԳ-ԲՄԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «15 » մարտի 2018թ.

<ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Մանուկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. **Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է **ՀՀ արդարադատության նախարարության Դատաիրավական ԾԻԳ պետական հիմնարկի** * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ԴԾԻԳ-ԲՄԾՁԲ-18/1*** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝
<ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Դ.Անհաղթի 23/22
<Ամերիաբանկ> ՓԲԸ
Հ/Հ՝ 1570003653770100
ՀՎՀՀ 01555207

Ա. Մանուկյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը գնահատման հանձնարակելը:*

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[5] N ԴԾԻԳ-ԲՄԾՁԲ-18/1** *(պայմանագրի կատարման ապահովում)*
2.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ **<ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ> ՍՊԸ**	
4. Վճարողի բանկը՝ **<Ամերիաբանկ> ՓԲԸ**	
5. Վճարողի հաշվի համարը՝ **1570003653770100**	
6. Վճարողի ՀՎՀՀ՝ **01555207**	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝ **ՀՀ արդարադատության նախարարության Դատաիրավական ԾԻԳ պետական հիմնարկ**	
9. Շահառուի ՀՎՀՀ՝ **02553363**	
10.Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	
11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **900005000758**	
12.Գումարը թվերով և բառերով՝ **8100000 (ութ միլիոն հարյուր հազար)**	
13.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD**	
14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ թիվ **ԴԾԻԳ-ԲՄԾՁԲ-18/1** պայմանագրի կատարման ապահովում	
15.Պայմանագրի ծածկագիրը՝ **ԴԾԻԳ-ԲՄԾՁԲ-18/1**	
16.Փաստաթղթերի անվանումը, քանակը, համարները, տրամադրման պայմանը	17. կից՝--- էջ
19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ 18.բ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[5] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*